ՊԱՇՏՈՆ	Ռազմավարության և ինովացիաների բաժնի վերլուծաբան
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ	Լրիվ դրույք
ԱՇԽԱՏԱՆ	ք. Երևան, ՀՀ
ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ	Հնարավորինս շուտ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԺԱՄԿԵՏ	16/05/2025թ.
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ	30/05/2025թ.

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ն ընձեռում է հնարավորություն Ռազմավարության և ինովացիաների բաժնում մասնակցել վերլուծական աշխատանքների իրականացմանը:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Մշակել կանխատեսման մոդելներ՝ օգտագործելով վիճակագրական գործիքներ, կապված եկամուտների և գործառնական ծախսերի հետ,
- Վերլուծել շուկայական միտումները, հայտնաբերել փոփոխությունները, որոնք կարող են ազդեցություն ունենալ Բանկի գործառնական և ֆինանսական հիմնական ցուցանիշների (KPI-ների) վրա,
- Համագործակցել Մանրածախ և Կորպորատիվ թիմերի հետ՝ տեղեկատվություններ հավաքագրելու նպատակով,
- Ապահովել կանխատեսման ճշտգրտությունը և մշակել բարելավման հնարավոր ուղիներ,
- Մշակել հաշվետվություններ՝ շահագրգիռ ստորաբաժանումներին ներկայացման նպատակով,
- Կատարել վերլուծություններ՝ բիզնես որոշումները հիմնավորելու համար:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն,
- 1-2 տարվա վերլուծական փորձառություն,
- Վերլուծական գործիքներով աշխատելու կարողություն,
- Հաղորդակցման հմտություններ,
- Մանրուքների նկատմամբ ուշադրություն,
- Խնդիրների արագ և արդյունավետ լուծման կարողություններ,
- Միաժամանակ մի քանի առաջադրանք կատարելու կարողություն,
- Թիմում արդյունավետ աշխատելու ունակություն,
- Ճշտապահություն և պատասխանատվության զգացողություն,
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և դրանց կիրառում:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտային ակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե ձեր գիտելիքները, մասնագիտական փորձն և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և դուք հետաքրքրված եք միանալու ԱյԴի Բանկի թիմին՝ անցեք հետևյալ հղումով https://idbank.bamboohr.com/careers/141: Հարցազրույցի կհրավիրվեն նախնական ընտրությունը անցած դիմորդները

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴի Բանկը» հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴի Բանկ» անվանումով:
ԱյԴի Բանկի առաքելություն է լինել առաջին ընտրության Բանկ հաճախորդների համար որպես լավագույն նորարար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքը https://idbank.am/ :